

Ի ՅԻՇԱՏԱԿ

434 — ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՏԱՐԻՈՅ — 1935

ՃԵՐԳ ԳԱՐԱԳԱՐՉԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ

ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ



Ընդհանուր աղէտալի պատերազմը խորապէս բարձրացուց ամէն տեղ անձանօթ զինուորին արժէքը եւ Եւրոպայի բոլոր մայրաքաղաքներուն մէջ, զեղեցիկ յիշատարականներու տակ, դրուեցան մշտափառ ատրուշաններ՝ սիրուն ու գունագեղ ծաղիկներու եւ դրօշներու շուրջ: Հայ ազգը ամէնէն շատը ունեցաւ անձանօթ զինուորներուն, նահատակներուն եւ տարագրութեան սեւ հանապարհին վրայ մեռնողներուն:

Անձանօթ Հայ նահատակներու մեծագոյն զերեզմանը հո՛ս, Հալէպ եղաւ, Ազիզիէյի եւ Շէյխ - Մագսուտի հողվրտիքներուն մէջ, ուր լայն փոսերու տակ կը հանգչին բիւրաւորներ. վրանին ո՛չ քար ունին, ո՛չ ծառ, բայց տարին նուազագոյն հինգ անգամ «Քահանայք եւ ժողովուրդք» անոնց համար կ'աղօթեն:

Այս փոքրիկ «ԱՐՁԱՆԱԳԻՐ»ը թող ըլլայ անթառամ պսակը Հալէպի մէջ թաղուող անձանօթ Հայերուն, ըլլան անոնք պանդուխտ, տեղացի, նահատակ կամ զինուոր: